

Հասմիկ Հարությունյան

ԿԱԹԸ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԸ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ

Բանալի բառեր. կաթ, կաթնամթերք, էպոս, հանելուկ, աղոթք, ավանդագրույց, առակ, առած-ասացվածք, երգ, օրհնանք, անեծք, երդում:

Բանահյուսական նյութերը յուրօրինակ աղբյուր են ժողովրդական մշակույթի տարբեր բնագավառների ուսումնասիրության համար, քանի որ դրանցում արտացոլված են մարդկանց նիստ ու կացը, վարքն ու բարքը, ավանդույթները, տնտեսական զբաղմունքները, հոգեկերտվածքը, հավատալիքները: Մարդիկ իրենց առօրյան ներկայացրել են երգելով, հեքիաթներ, զրույցներ ու առակներ պատմելով, աղոթելով, երգվելով, օրհնելով ու անիծելով: Բանահյուսական նմուշներն, անշուշտ, զուրկ չեն պատմական հենքից, և դրանց աղբյուրագիտական արժեքը շատ մեծ է:

Ավանդաբար բնութագրվելով առավելապես երկրագործական, այգեգործական տնտեսաձևով հայերն իրենց բանավոր մշակույթում արտացոլել են հատկապես այդ բնագավառը: Ի տարբերություն դասական անասնապահական տնտեսություն վարող ժողովուրդների, որոնց մեջ, օրինակ, երդումները, օրհնանքները, անեծքները կառուցված են բացառապես անասնապահական մշակույթի, կաթնատնտեսության շուրջ¹, հայոց մեջ վերոնշյալ ժանրերում գերակայում են արտին, հասկին, ջաղացին, հացին, խմորին, գինուն վերաբերող նմուշները: Անշուշտ, բանահյուսական ամենատարբեր ժանրերում իր արտացոլումն է գտել նաև կաթնատնտեսությունը, քանի որ այն կարևոր և պատվավոր տեղ է ունեցել հայոց արտադրական մշակույթում:

Սույն հոդվածը նպատակ ունի բանահյուսական ամենաբազմազան նյութերը՝ հանելուկ, աղոթք, ավանդագրույց, առակ, առած-ասացվածք, երգ, օրհնանք, անեծք, երդում և այլն, դիտարկել որպես ազգագրական աղբյուր: Փորձել ենք վերլուծել կաթնատնտեսությունն արտացոլող այն յուրօրինակ նմուշները, որոնք ճանաչողական նշանակություն ունեն ոչ միայն կաթի մշակման գործընթացի, այլև առհասարակ կենցաղավարումից արդեն դուրս եկած ու մոռացված մշակութային ամենաբազմազան երևույթների վերաբերյալ:

Կաթը հայ ժողովրդական պատկերացումներում առաջին հերթին անարատության խորհրդանիշ է, որը հրաշալիորեն դրսևորված է «Սասնա ծռեր» էպոսում: Խանդութ խանումի գովքը լսելուց հետո Դավիթը վերցնում է սազը. «Գուսաններ, դուք բարով էկաք. Իմ սիրտ քանց կաթն անարատ էր, Մերան թալիք, մակարդիք»²: Հիշենք հայերեն «կաթի պես» արտահայտությունը, որ գործածվում է *մաքուր, անբիծ* իմաստով: Թեև էպոսի ողջ կառուցվածքը հենված է ջրի զորության գաղափարի վրա, պատումներից մեկում դրսևորվում է նաև կաթի զորությունը: Իմաստուն ծերունին հերոսների ուժը չափելու և, հավանաբար, մարտից առաջ նրանց զորեղացնելու ու հսկաների դեմ անպարտելի դարձնելու նպատակով ստիպում է կաթ խմել: Էպոսում դրսևորված է նաև կարագի սննդարար, առողջարար, զորեղ ուժը. հիշենք, որ Դավիթը մեծացավ Սասունից բերած մի բեռ մեղրով ու մի բեռ կարագով: Առհասարակ *յուղ ու մեղրը*, որ հաճախ է հանդիպում բանահյուսական նյութերում, ոչ միայն ուժի ու զորության, այլև մաքրության խորհրդանիշ է:

Ժողովրդական պատկերացումներում սպիտակը ասոցացվում է կաթի և մածունի հետ, որոնք այդ գույնի հոմանիշն են: Դա հստակ արտացոլվում է հանելուկների պատկերավոր բանաձևերում, երբ ասենք, կաթն ու մածունը սպիտակի հուշումն են³: «Սև է

¹ Ст'у Народы Кавказа.- Серия Народы мира, т. 1, М., 1960, с. 143.

² Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Ե., 1961, էջ 259:

³ «Հիշենք նաև սրամիտ զրույցը, որում իր արծազանքն է գտել կենցաղավարումից վաղուց դուրս եկած, երբեմն ծայրահեղ դրսևորում ունեցած խուսափման սովորույթը: Զխոսկան, ամոթխած հարսը, փորձելով

սաթի նման, սպիտակ է կաթի նման...» հանրահայտ հանելուկը, որը վերաբերում է հիմնականում ծիծեռնակին, հայոց պատմագագագրական տարբեր հանրություններում ունի նաև այլ պատասխաններ՝ արագիլ, կաչաղակ, աքաղաղ: Նույն տրամաբանությամբ են կազմվել աչքերին վերաբերող հանելուկները՝ «Սև սալա, սվտալ սալա, Կաթի մեջը կը ճըլվըլա», «Մաննոց (մատնոց) մը մածուն, Ներկուն ու նախշուն»¹: Որոշ հանելուկների այլաբանական բանաձևերը կաթնամթերքի տեսականու միջոցով կերտված գեղագիտական պատկերներ են: Օրինակ՝ հայկական հանելուկներում նման ընդգծված պատկեր ունի լուսինը՝ հայ մարդուն այնքան ընկալելի ու պարզ հուշումով՝ տան կտուրին, որպես մի բարձր տեղ դրված ամանով մածուն կամ կաթի սեր:

Հանելուկում նույնքան հրաշալիորեն է դրսևորվել տարվա, ամիսների «թռչելու»՝ արագ անցնելու գաղափարը: «Էս տարին էլ (էս ամիսն էլ) գլորեցինք», -հաճախ են ասում մարդիկ, իսկ հանելուկում այդ միտքն արտահայտել են չորաթանի միջոցով, քանի որ գնդիկները գլորվելու հատկություն ունեն. «Չորս չորթան, Տասնվերկու հելթան (թան, սուլթան), Հեծել են ու կերթան (Մեկ-մեկու էտիվ կերթան)»²:

Որպես հանապազօրյա կենսական արժեք՝ ժողովրդական պատկերացումներում կաթի հետ հաճախ ասոցացվել է նաև բերքը (արտի, այգու, մեղվի և այլն), որը նույնպես դրսևորվել է հանելուկներում. «Կաթ է տալի, տուն չի գալի» (Մեղու)³:

Բուսական յուղը ևս ածանցվել է կաթնամթերքին: Չիթհանը բնութագրող հանելուկում կտավատից արտադրվող ձեթն ու քուսպը համեմատվել են յուղի ու պանրի հետ. «Էծը վեր իլավ քարը, Եղ հանեց, պանիր թափեց»⁴:

Կաթնամթերքի տեսականուն վերաբերող հանելուկների պատկերավոր բանաձևերը հարուստ ազգագրական նյութ են դրանց պատրաստման, գործածման ձևի, նրբությունների մասին: Օրինակ՝ «Սուրբ Սարգսա դուռն արծթա, Քանի քաշիմ՝ ճիվիկտա (ձգվել, երկարել)» հանելուկը վկայում է ճիլ կամ թել պանիր պատրաստելու եղանակը՝ տաք ժամանակ ձգելով երկարացնելը: Աղաջրից հանելուց հետո պանիրը լվանալու անհրաժեշտությունը դրսևորվել է ընդամենը մեկ բառով կազմված հանելուկում՝ «Հանելուկ՝ Վլանալուկ (լվանալիք)»: Պանիրը դանակով, մածունը գդալով կտրելը նմանեցվում է կենդանի և թռչուն մորթելուն, քանի որ կաթնամթերքի առկայությունը ևս ունևորության ցուցիչ է. «...Ճերմակ խճըճիկ, Կըմորթիմ, կըմորթիմ՝ արյունը չելիլ», «Սպիտակ հավը մորթեմ, Արուն չի կաթի»: Թանը տոպրակը լցնելու, քամելու, չորացնելու, իսկ ձմռանը չոր գնդիկները ջրով բացելուց հետո գործածելու սովորույթը դրսևորված է հետևյալ հանելուկներում. «Ամռանը կսառչի քար կդառնա, Չմռանը կհալչի ջուր կդառնա», «Ամռանը կապըմ են, Չմռանը ետ անըմ», «Ճըխտիմ քամիս, Չմեռ ծամիս» (Չորաթան)⁵:

Բանահյուսական մյուս ժանրերի նման հանելուկները ևս ունեցել են ճանաչողական նշանակություն: Կարագ ստանալու համար հավաքվող մածունն ու կաթի սերը հով տեղում պահելը դրսևորված է խնոցուն վերաբերող «Նստիմ հով, Ջըմզըմբալեն ընկնամ ծով» հանելուկում⁶: «Անդալա, մանդալա, Էն կլորի, տյու գյունդ արա» հանելուկը հուշում է, որ կարագից գնդեր են պատրաստել:

Հանելուկներում հստակորեն դրսևորված է մարդու վերաբերմունքը կաթնամթերքի տարբեր տեսակների նկատմամբ. կարագն ամենահարգին է, թանը՝ ամենահասա-

հասկացնել, որ նոր ծնված ծագը ճակատին սպիտակ նշան ունի, սկեսրայրի ճակատին մածուն է քսել: Տե՛ս Թ. Գևորգյան, Լոռի (Տաշիր-Չորագետ), Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), 20, Ե., 1999, էջ 151:

¹ Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Ե., 1965, էջ 75, 91, 92:

² Նույն տեղում, էջ 6, 17:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 26, 28, 47, 49, 78:

⁴ Նույն տեղում, էջ 175:

⁵ Նույն տեղում, էջ 140, 111:

⁶ Այն իրողությունը, որ նույնիսկ հով տեղում կաթի սերը երկար ժամանակ հնարավոր չէ պահել, կթթվի, հրաշալիորեն արտացոլված է գինվորին սպասող գեղջկուհու երգում. «Սեր են քաշել թթվել ա, Ջահիլ օրս մթնել ա, Դե արի՛, արի՛ Սարքիս ջան, Գալտ ա պարի՛, էհե՛յ ջան» [Խեմյան Է., Տավուշ, ՀԱԲ, 21, Ե., 2000, էջ 213]:

րակը: «...Տանկով գարկին փոր ճղիցին, Արուն վեր աշխրին ցրվիցին, Միսն փայ արեցին, Ոսկորներ տան խորիցին» հանելուկում պատկերված է խնոցի հարելուց հետո թանը հարևաններին բաժանելու սովորույթը՝ ի տարբերություն կարագի կամ ժածկի (շոռի)¹: Նման վերաբերմունքն արտացոլված է բանահյուսական տարաբնույթ նյութերում, օրինակ՝ հայոց ներէթնիկ կարծրատիպերն² արտացոլող երգիծական խաղիկներում («Չիրուկ՝ մարդ ու կես կապրին, կխմեն սիջուկ»), ժողովրդական երգերում («Մեղր ու կարագն ընծի, Թան ու թանջուրը քրզի»)՝³: «Սիպտակ հլիվոր, Ղեղին թագավոր» հանելուկում թանը պատկերավոր ձևով համեմատվում է ծերունու հետ՝ նկատի ունենալով ճերմակ մորուքը, իսկ կարագը՝ թագավորի հետ՝ նկատի ունենալով հարգը: Այլ տարբերակի այլաբանական բանաձևը գեղագիտական հրաշալի պատկեր է, որտեղ թանի հուշումը սպիտակն է, կարագինը՝ դեղինը. «Սպիտակ դաշտ, Ղեղին ծաղիկ մեջտեղը»⁴:

Որոշ հանելուկներում որպես հուշում կարևորվել են կաթի ու կաթնամթերքի որակական հատկանիշները. «Ճիրիմ (ծորել) թուք չիմ, Ճերմակ իմ՝ փուք (բշտիկ) չիմ» (Կաթ), «Ջուրն եմ գցում, Թաց չի ըլում, Դուս ենք բերում, Պինդ ա մնում» (Կարագը)⁵:

Կենսական կարևոր և բուժիչ հատկությունների շնորհիվ կաթնամթերքը ժողովրդական հավատալիքներում, ինչպես օրինակ աղոթքներում, հաճախ հանդես է գալիս որպես չարխափան միջոց: Կտանգը չեզոքացնելու, վնասագերծելու նպատակով չարին հակադրվում է չարը, ուստի չարի համբավ ունեցող կապույտ աչքին աղոթքում հակադրվում են «կապույտ» մածունը, կարագը և այլն. «Կապիտ կովը կթեցի, Կապիտ մածուն հանեցի, Կապիտ խնոցի հարեցի, Կապիտ կարագ հանեցի...»: Հավատում էին, որ չար աչքի գորությունը կարող են չեզոքացնել նրա տիրոջը «կապույտ մածուն» հյուրասիրելով. «Կապույտ կթիմ, Կապույտ մակրթիմ, Կապույտ աչքերովին ուտեցնիմ»⁶:

Հայ ժողովրդական հավատալիքներում չարխափան հատկություն է վերագրվել նաև արքայական ծիրանի գույնին, ինչով էլ կարելի է պայմանավորել աղոթքում ծիրանագույն կաթնամթերքի հիշատակումը: Չարին կապելու կանանց աղոթքում առտնին աշխատանքներին, այդ թվում՝ կթելուն և մակարդելուն, մասնակից են դարձրել նաև աստվածաշնչյան կերպարներին՝ ակնկալելով նրանց հովանավորությունը: Աղոթքները միտված են կյանքի և ունեցվածքի անվտանգությանը, որի համար մարդիկ խնդրում են օրհնել, չար աչքից ու չար լեզվից հեռու պահել ապրուստի միջոցները, այդ թվում նաև թացանը, թանը, եղը, եղամանը, պանիրն ու չորաթանը, ժածիկն ու մածունը: Նույն նպատակով աղոթքով է ուղեկցվել խնոցին հարելու գործընթացը. «Եղ ծաղիկ, Ղեղին ծաղիկ, Հափնե առե, Հափնե բուսե, Հերն նստեր, Օրթին փնջե»⁷:

Բուժաղոթքներից մեկում հիվանդ փայծաղը ապաքինման ակնկալիքով համեմատվում է հալած յուղի հետ, քանի որ այն մաքրության, պարզության խորհրդանիշ է: Արդար յուղը հիշատակվում է նաև չար աչքի աղոթքներում. «Հոգևոր պառավը հանե չար աչքը...Եղի պես պարզեցնե...»⁸: Փորացավի բուժաղոթքի հիմքում ընկած է հայտնի ավանդազրույցը, ըստ որի՝ աղքատի կերպարանքով ողորմություն խնդրող

¹ Նույն տեղում, էջ 140, 142:

² Նկատենք, որ կարծրատիպերը երբեմն կազմվել են կաթնամթերքի հետ համեմատությամբ: Օրինակ՝ առաքելական հայերը կաթոլիկներին այսպիսի բնութագրում են տվել. «...Ֆռանկները անհամ բան են, ... Ոչ մածուն են, ոչ ալ թան են» [Լալայան Ե., Ջավախք, Երկեր, հ. I, Ե., 1983, էջ 388]:

³ Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Ե., 1974, էջ 355, Հայ շինականի աշխատանքի երգեր: Կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Ե., 1937, էջ 200, 201, 204: Տե՛ս նաև Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Ե., 1970, էջ 285, 287, 288, Խաչատրյան Ռ., Թալին, ՀԱԲ, 19, Ե., 1999, էջ 141:

⁴ Լալայան Ե., Բորչալուի գավառ, Երկեր, հ. III, Ե., 2004, էջ 22, Ս. Հարությունյան, 1965, էջ 141:

⁵ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 111, Լալայան Ե., 2004, էջ 22:

⁶ Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Ե., 2006, էջ 86, 95, 236:

⁷ Տե՛ս Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 153, 366, 155, 369, 160, 206, Լալայան Ե., 1983, էջ 340:

⁸ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 82: Հիշենք հայերենի «հալած յուղ» (անբասիր ընդունվող բան), «հալած յուղի տեղ ընդունել» (հավատալ), «հալած յուղի պես պարզ մարդ» արտահայտությունները, «արդար եղը ջրի տակ չի մնա» առածը և այլն: Տե՛ս Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 127, 309:

Քրիստոսին անբարեհամբույր տանտիրուհին միայն թան է հյուրասիրել կոտրած գդալով, իսկ փորացավից տանջվող նրա երեխային Քրիստոսը բուժել է հետևյալ բառերով. «Ինքը սուրբ, Տեղը մսուրք, Թթու թան, Պոչիկ գդալ, Պռատ խան. Ով սուրբ Աստվածածին, Դու կտրես (այսինչի) սանջուն»։ Նկատենք, որ ժողովրդական բժշկության մեջ փորացավը բուժելու ամենատարածված միջոցը համարվել է թթու թան խմեցնելը և վերոնշյալ աղոթքի ուղեկցությամբ կոտրած գդալով որովայնը մերսելը։ Տանտիրուհու վարմունքը մեկ անգամ ևս վկայում է, որ թթու թանն աղքատի կերակուր էր, առանց ափսոսանքի կարող էր հյուրասիրել անգամ ամենաչկամ տանտիրուհին։ Մեկ այլ ավանդագրույցում հայը վիրավորվում է իրեն միայն հաց ու թան հյուրասիրած քուրդ տանտիրոջից, և հաջորդ անգամ ինքն էլ նրան հյուրասիրում է հաց ու ժածիկով (շոռ)¹։

Դարեր շարունակ բնակչությունը հարկեր է տվել նաև բնամթերքով, այդ թվում նաև օտար նվաճողներին։ Հարկի կարևոր մաս է կազմել կաթնամթերքը, հատկապես պանիրն ու կարագը։ Հարկերի հետ կապված հոգսը ժողովուրդն արտահայտել է երգերում, բանահյուսական տարաբնույթ նյութերում։ «*Կարագը հալած յուղ շինեց*» արտահայտությունը, որն ունի *ավելի բարդացրեց* իմաստը, բխում է այն ավանդագրույցից, ըստ որի՝ կարագով տրվող ծանր հարկի դեմ ժողովրդական բողոքն ավարտվում է նրանով, որ այդուհետ հարկը յուղով պետք է տային։ Բազմաթիվ ավանդագրույցներում դրսևորված է կաթ խնդրող և մերժում ստացող աղքատի կամ Աստծո անեծքից հովվի ու ոչխարների քարանալու մասին հավատը։ Ավանդագրույցներում դրսևորված է նաև հավատը «Պոչավոր պառվներին» գոյության մասին, որոնք, հեծնելով ձձունը (խնոցին), թռչում-մտնում են տները, յուղ ու պանիր գողանում։ Ըստ ավանդագրույցի՝ *եղկընուտա* առվի անունը ժողովուրդը ստուգաբանում է *եղ* բառով՝ հավատալով, որ այդ ջրով խնոցին լվանալուց հետո կարագը ավելացել է²։

Կաթի շուրջ հյուսված բանահյուսական նյութերից հանրահայտ է մահմեդականների խոզի միս չուտելու մասին ավանդագրույցը, որում դրսևորված է հայոց հավատալիքներում նույնիսկ սրբազնացված ջրի նկատմամբ կաթի գերակա դիրքը։ Մեկ այլ ավանդագրույցի համաձայն՝ վրացին իր հայուհի կնոջը ստիպում է ուղղափառություն ընդունել։ Երբ կինը հրաժարվում է, մածուն է քսում նրա մարմնին, որ շները լիզեն, սուրբ մեռոնը հանեն³։

Այն, ինչ արձանագրել է Ե. Լալայանը հարյուր և ավելի տարիներ առաջ, որ ժողովուրդը «հաճությամբ չի դիմում բժշկին, որովհետև բժիշկները չեն ճանաչում ժողովրդին, չեն հասկանում ոչ նրա վիճակը, ոչ հոգեբանությունը, շատ անգամ նրանց խորհուրդները մնում են անկատար», տեսնում ենք նաև մեր օրերում։ Այն գաղափարը, որ հիվանդին բժիշկը կարող է բուժել միայն նրան լավ ճանաչելու, նրա մասին ամեն ինչ իմանալու դեպքում, ավանդագրույցում հրաշալիորեն դրսևորված է հայերի հետ կողք-կողքի ապրող, անասնապահական մշակույթով բնութագրվող քրդերի օրինակով. բժիշկ Լոխմանի աշակերտը բուժել է նրա երեխային՝ թան խմեցնելով և թանով լողացնելով, երբ կինը խոստովանել է, որ երեխայի կենսաբանական հայրը քուրդ է⁴։ Մեկ այլ ավանդագրույցում արտահայտված է մարդկանց համոզմունքը կաթի բուժիչ, հրաշագործ հատկությունների մասին. Ցավերից մեկի՝ Ջերմի սպառնալիքները չեն վախեցնում հովվին, որովհետև նա գիտի «աստի դեղը. Կկթեմ օչխրին կաթը, կդնեմ գիշերը աստղը, առավոտ խմեմ սաղնամ կը»⁵։

¹ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Ե., 1969, էջ 480, 403, Ե. Լալայան, 2004, էջ 234, Գրիգորյան Ռ., Գեղարքունիք, ՀԱԲ, 14, Ե., 1983, էջ 132:

² Տե՛ս Ղանալանյան Ա., 1969, էջ 17, 69, 76, 89, 106, 269, Լալայան Ե., 1983, էջ 394, Հակոբյան Գ., 1974, էջ 356:

³ Տե՛ս Լալայան Ե., 1983, էջ 394, 85-86:

⁴ Տե՛ս Լալայան Ե., 2004, էջ 177:

⁵ Լալայան Ե., 1983, էջ 193:

Բանահյուսական նյութերում ուրույն խումբ են կազմում առակները, որոնցում հիմնականում հիշատակվում է պանիրը: Հիշենք թակարդում դրվող խայծը¹, խորամանկ աղվեսի և ագռավի հանրահայտ պատմությունը² և այլն: Աղքատ մարդու ունեցած-չունեցած մի կովի տված կաթի ու դրանից պատրաստած կաթնամթերքի՝ որպես հանապազօրյա ապրուստի միջոցի հայտնի սյուժեն առկա է ոչ միայն առակներում, այլև բանահյուսական տարաբնույթ նյութերում³: Որոշ առակներում հիմնական գաղափարն ուսուցանվում է կաթը կովի քացուց թափվելու⁴, կաթին ջուր խառնողի պատժվելու մոտիվներով⁵: «Յուղը խոզը կերավ» առակում մեկ անգամ ևս ընդգծվում է կարագի բարձր հարգը՝ որպես դատավորին տրվող կաշառք⁶:

Հայոց արտադրական մշակույթի տարբեր բնագավառները, այդ թվում նաև կաթի մշակման աշխատանքները ուղեկցվել են երգերով: Ոչ միայն աշխատանքային, նույնիսկ մանկական երգերում արտացոլված են կաթնատնտեսության իրական տեսարաններ, կաթի մշակման նրբություններ: Օրինակ՝ հայոց մեջ առավելապես կարագ ստացել են՝ մածուներ (ոչ թե կաթի սերը) խնցում հարելով. «Կովը կթիմ, մածուն մերիմ կճուճը, Ծծում զարկեմ, կարագն ուտի Մկուճը», «...Ծծումը լցեմ մածուներ, ...Մածուն մերենք էս դայդա, Ծծում հարենք էս դայդա», «Զխկամ-չխկամ...Մեջս է կարագ, հաստ ու բարակ: Կերթամ, կուգամ, կերթամ, կուգամ, Հարսի փորին բարև կուտամ»:

«Խնցի ջան խնցի, Մեջդ լիքը մածուն լցի... Մեջդ տաքը-պաղ ջուր լցի» տողերը հուշում են, որ մածունը հարելիս ջուր են ավելացրել: Կարագի ստացման ընթացքը հրաշալիորեն պատկերված է այս երգում. «Քանց կորեկ ծըլի կարայք, Քանց սիսեռ սրսուռ (անարատ, մաքուր, ընտիր) կարայք, Քանց խնձոր կունդ-կունդ կարայք»: «Հա՛ ձծում, հա՛ կարագ, Եղն իվի, ջուրն իվի, Քընց լուսնակ բլորիս, Քընց երկիր կլորիս, Ընձի ընդրան փայ էղնիս» մանկախաղաց երգի գեղեցիկ պատկերով ներկայացվում է խնցի հարելու ընթացքում կարագի գնդիկների առաջացումը⁷:

Վասպուրականում գրառված երգերից մեկում տեսնում ենք յուղի ստացման աստիճանական փուլերը՝ կթելուց մինչև յուղ հալելը. «Մաքին կթեցի, կաթը տաքցուցի, Մերանը քցցի, Մածունը մերեցի, Լցեցի խնցին, Խնցին հարիցի, Կարագը հանիցի, Հանեցի աղիցի, ժողեցի, ժողեցի, Տեղին եղ հանեցի»: Երգում հստակ հիշատակություն կա այն մասին, որ հայոց որոշ ազգագրական խմբեր յուղի ստացման համար գործածել են նաև ոչխարի կաթը, որը ամենուր օգտագործվել է հիմնականում պանիր պատրաստելու համար: Տարբեր կենդանիներից ստացվող կաթնամթերքը երգերում զանազանվում է նաև որակական հատկանիշներով, գույնով, առտնին կենցաղում ունեցած պահանջարկով ու հարգով. «Կովու կարագ մանդըր ի, Գոմշու կարագ ծանդըր ի, Կովու

¹ Հայտնի է «Օխտը թալաքից պանիր կերած» (շատ փորձված, շատ խորամանկ) արտահայտությունը: Տե՛ս Խենչյան Է., 2000, էջ 226:

² Տե՛ս Հայ ժողովրդական առակներ (այսուհետև՝ ՀԺԱ): Կազմեց և մշակեց Ա. Նազինյանը, Ե., 2008, էջ 10, 14, 16, 65, ՀԺԱ: Կազմեց և մշակեց Ա. Սարգսյանը, Ե., 2011, էջ 45: Այս հայտնի պատմությունն ընկած է նաև արդի քաղաքական անեկդոտներից մեկի հիմքում: Տե՛ս Սարգսյան Ա., Հայ ժողովրդական երգիծական մանրապատումների կապը առակի, ավանդազրույցի և աղոթքի տեսակների հետ.- Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ, XVI, Ե., 2014, էջ 403:

³ Տե՛ս ՀԺԱ, 2008, էջ 72, Գրիգորյան Ռ., 1970, էջ 300, Գևորգյան Թ., 1999, էջ 83, 176: Վերոնշյալ սյուժեն հաճախ է հանդիպում նաև հեքիաթներում, որոնք նպատակ ունենք քննարկել առանձին:

⁴ Հայտնի է «Կաթնատու (օսալ՝ վատ) կովի նման կաթն արխաջով մին արավ» առածը: Գևորգյան Թ., 1999, էջ 212: Տե՛ս նաև Ղանալանյան Ա., Առածանի, Ե., 1960, էջ 117:

⁵ Տե՛ս ՀԺԱ, 2011, էջ 121, Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, Առակներ: Դպր. Կրտսեր և միջին տարիքի համար: Ե., 1986, էջ 34: «Կաթ ծախող» արտահայտության ստախոս իմաստը հավանաբար բխում է վաճառվող կաթին ջուր խառնելու հանգամանքով: Այն արտացոլված է նաև մերօրյա գվարձախոսությունում, երբ կաթ վաճառողին հարցնում են, թե ինչքան ջուր խառնեն նորածնին կերակրելու համար, միամտորեն պատասխանում է՝ ինչքան պետք ա, ես խառնել եմ: Նյութը տրամադրել է բանագետ Ա. Սարգսյանը:

⁶ Տե՛ս ՀԺԱ, 2011, էջ 151: Հիշենք «յուղ քսել բերնին» (կաշառել) արտահայտությունը: Տե՛ս Թ. Գևորգյան, 1999, էջ 153:

⁷ Ղանալանյան Ա., 1937, էջ 195-197, 202, 203, Գրիգորյան Ռ., 1970, էջ 150, 177:

կարագ փռփուռ ի, Գոմշու կարագ քանց նուռ ի», «Կովու մածուն լցեն ինե՝ Տեղին քար-քար կարագ խանի...Մաքու մածուն լցեն ինե, Սիպտակ կարագ չալմ խանի»¹:

Կենցաղում ունեցած կարևորության հերթականության մեջ, նաև ըստ երգերի՝ լավագույնը կարագն է, որին, ինչպես վերը նշեցինք, վերագրվում են սննդարար և բուժիչ հատկություններ. «...Ուտենք, խմենք, Ջորանանք, Ցավ ու չոռը մոռանանք»: Հատկանշական է, որ այս հանգամանքն առավելապես ընդգծվում է օրորոցային և մանկախաղաց երգերում, քանի որ մանկահասակ երեխաների հիմնական սնունդը կաթն ու կաթնամթերքն էր: Կաթի ու կարագի բուժիչ հատկությունը դրսևորված է նաև առակում. «Ինչքան ստամոքսից ու թոքից հիվանդ մարդ կա, իմ կարագն ու կաթն են օգտագործում...,- ասում է իր գովքն անող կովը»²:

Երգերում մարդիկ անդրադարձել են նաև այս կամ այն կաթնամթերքը պատրաստելու եղանակին, օրինակ՝ ժաժիկը թանը տաքացնելով էին ստանում, իսկ չորաթանը՝ հանգստացած, չտաքացրած թանի նստվածքից, որը կոչվում էր «քամած թան»³. «Թանը հանի քամեցի, Սրսուռ չորթան շինեցի. Թանը հանի եփեցի, Շոռ ու ժաժիկ շինեցի»: Կաթի առատության, կաթնամթերքի պատրաստման սեզոնի մասին հուշում է «Լազլագն եկավ էս դայդա, Մենք կաթ կթենք էս դայդա» երգը, իսկ նոր կթած կաթի արտաքին տեսքն արդեն կարող էր հուշել, թե ինչ են պատրաստելու. «Կովը կթիմ, փռփռաց, Ղայմաղ կիկա»: Երգերը պարունակում են տեղեկություն այն մասին, որ կաթնատնտեսության մեջ ընդունված էր նաև որոշ կաթնամթերքներ պատրաստել տարբեր կենդանիների կաթի խառնուրդից⁴: Հատկապես սարերում դա առավել նպատակահարմար էր. «Չադր առանք կացինք սար, Էժը ոչխար հավասար, Կթինք, հարինք թան ելավ, Յեղ, պանիր լեյջան (առատ, լի) ելավ»: Կաթնատնտեսության գերակայությունը Հայաստանի բարձրադիր շրջաններում կարելի է նկատել երգի այս տողերում. «Կովը կթիմ, գարկիմ, եփիմ ապուրը, Կովն ու կիթն ի մեր նամուսը աբուռը»⁵:

Երեխային ուղղված գովասանքի և մաղթանքի բանաձևերը հաճախ ուղեկցվում են համեմատություններով, որոնցում զգացվում է նաև կաթնամթերքի կարևորությունն ու հարգը. «...Մոթալի եղ իմ ըրախան...», «...Օխչրի թացան իմ բալա...», «...Եղի մաշնակ իմ Լևոն...»: Աղջիկ երեխային գովերգող հազվադեպ երգերից մեկի «Մաքուր թացան իմ աղջիկ» տողում «թացան» բառը պետք է ընկալել ոչ միայն *կաթնամթերք*, այլև ավելի շատ *արդար, անարատ, անբիծ* իմաստով: Որոշ երգեր թույլ են տալիս պատկերացում կազմել նաև ընտանիքի սոցիալական դրության մասին՝ ելնելով նաև կաթնամթերքի տեսականուց. «...Հալա, հալըմ չկա, Թան իփեմ՝ պուտուկ չկա», «...Ազիզ նանիդ ջանը դուրբան, Իմ ձձմի թանը դուրբան...»⁶:

Հայտնի է, որ երեխաների սննդակարգում գերակայել է կովի և այծի (հատկապես որոշ հիվանդությունների դեպքում)⁷ կաթը, սակայն, ելնելով երգերի բովանդակությունից՝ որոշ տարածաշրջաններում (Տարոն և այլն) հավանաբար երեխաներին կերակրել են ոչխարի կաթ ու մածունով. «Թռի, թռի, թռցնեմ, Սև մաքու կաթ կերցնեմ», «Զգառն ու մաքին ես տեսա, Ես կթեմ՝ դու մերա, Ես բրթեմ՝ դու գտալա»: Նկատենք, որ

¹ Ղանալանյան Ա., 1937, էջ 197-205:

² Ղանալանյան Ա., 1937, էջ 197, 205, 199, Գրիգորյան Ռ., 1970, էջ 59, 66, 69, 91, 126, 176, 209, Խաչատրյան Ռ., 1999, էջ 151-153, ՀժԱ, 2008, էջ 148:

³ Տե՛ս Քալանթար Ա., Կաթնային արդյունքներ.-Ազգագրական հանդես, Դ, Թիֆլիս, 1998, էջ 283:

⁴ Ղանալանյան Ա., 1937, էջ 200-201, 196-197: Երբեմն այծի և ոչխարի կաթը խառնել են՝ հատուկ որակի պանիր ստանալու նպատակով, թեև այս մեթոդին առավելապես դիմել են տնտեսական նկատառումով. հիմնականում այծի կաթը քիչ է եղել, և նպատակահարմար չի եղել առանձին օգտագործումը:

⁵ Ղանալանյան Ա., 1937, էջ 234, 197:

⁶ Գրիգորյան Ռ., 1970, էջ 159, 150, 173, 134, 139:

⁷ Հայտնի է, որ առասպելական հերոսները սնվել են առյուծի կաթով, այդ առումով դրան վերագրվող բուժիչ հատկանիշները հրաշապատում հեքիաթներում գերազանցել են այծի կաթին: Տե՛ս Ռ. Գրիգորյան, 1983, էջ 91-92:

ավանդագրույցներում ևս մոլորված մանուկները սովամահ չլինելուց փրկվում են՝ ոչխարի կրծքից կաթ ծծելով¹:

Մանկական երգերից մեկում ծովի հանդարտությունը նկարագրվում է կաթի սերի հետ համեմատությամբ. «Ծովը խայնաղ կլմանի»²:

Կաթնամթերքի շուրջ կառուցվել են նաև մանկական խաղեր, օրինակ՝ «մածուն ծախեն» խաղը, որն ուղեկցվել է երգով, պարով³:

Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգերը արժեքավոր աղբյուր են ոչ միայն տղաբերքի և մանկատառության, այլև կաթնատնտեսության ու մշակութային տարբեր իրողությունների վերաբերյալ: Այսպես՝ հովվի ու գայլի երկխոսության խաղերգում արտահայտվում է սոցիալական այն իրողությունը, որ աղան, հովվի հոգին հանելով էլ, կաթ ու մածուն կտանի⁴:

Հաճախ կաթնամթերքների անուններով են կազմվել մանկական խաղերգերի, ծաղրերգերի, երգիծական ու ծիծաղաշարժ երգերի, վիճակի երգերի հանգերը⁵:

«Ձեռնիս ա մածնի քսակ, Էտնիցս եկաք հըսաք...» վիճակի երգը հուշում է, որ հայոց մեջ մածուն քամելու սովորություն կար, հատկապես սարերում, որովհետև մածունը գյուղ ուղարկել հնարավոր էր քամած վիճակում, տոպրակով»: «Թավան ծակ է, եղ չը կա, Փեսան էկավ՝ տեղ չը կա...» վիճակի երգը հուշում է կենցաղավարումից վաղուց անհետացած «գոքանչի ծվածեղի» ավանդույթը, որով աղջկա մայրը փեսային «հրենցով անելու» նպատակ էր հետապնդում՝ հավատալով, որ նպաստում է աղջկա երջանկությանը, ընտանեկան ամրությանը⁶:

Ինչպես նշեցինք, հայոց անեծքներում, օրհնանքներում, բարեմաղթանքներում գրեթե տեղ չեն գտել կաթնատնտեսությունն արտացոլող թեմաները: Մեզ հանդիպած հազվագյուտ անեծքներից մեկը («Աչք ունենաս, լուս չունենաս, Խթման օրը եղ չունենաս»)՝ հուշում է, որ Խթման (Սուրբ Ծննդյանը նախորդող) օրը յուրի առկայությունը պարտադիր էր, որովհետև երեկոյան ընթրիքի սեղանը զարդարում էր առավելապես լիուլի յուղով պատրաստած ուտեստեղենը:

«Բարաքեն թացանիդ մեջ ըլի»⁸, «Կաթնառատ ըլլա»⁹ և նմանատիպ բարեմաղթանքները հնչել են կոնկրետ դեպքում, օրինակ, երբ հարևաններին դալ¹⁰ են բաժանել և այլն:

Կյանքի տարբեր իրավիճակներ բնութագրող ժողովրդական իմաստությունը խտացված է առած-ասացվածքներում, փոխաբերական արտահայտություններում¹¹: Ղրանցում մարդկային հարաբերությունները, բնավորության այս կամ այն գիծը երբեմն դրսևորվում են նաև կաթի ու կաթնամթերքի օրինակով, դրանց որակական հատկանիշ-

¹ Գրիգորյան Ռ., 1970, էջ 165, 144, Լալայան Ե., 1983, էջ 233: Նշենք, որ ազգագրական և բանահյուսական նյութերում սև ոչխարի և՛ միսը, և՛ կաթը ավելի գերադասելի են: Տե՛ս, օրինակ, Գրիգորյան Ռ., 1983, էջ 96-97:

² Տե՛ս Գրիգորյան Ռ., 1970, էջ 228: Տե՛ս նաև Աճառյան Հ., Թուրքերենի փոխառեալ բառեր հայերենի մեջ, Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մ.-Վաղարշապատ, 1902, էջ 162:

³ Տե՛ս Հայ ժողովրդական խաղեր: Աշխատասիրությամբ Վ. Բոդյանի, հ. III, Ե., 1983, էջ 44, Գրիգորյան Ռ., 1970, էջ 245-246:

⁴ Տե՛ս Գրիգորյան Ռ., 1970, էջ 228:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 236, 280, 282, Լալայան Ե., 1983, էջ 312, 321, 353, 369, 371, 375, Լալայան Ե., Արցախ, Եկեր, հ. 2, Ե., 1988, էջ 453, 455, 456, 463, 471, Գևորգյան Թ., 1999, էջ 176, Ղազիյան Ա., Արցախ, ՀԱԲ, 15, Ե., 1983, էջ 157:

⁶ Լալայան Ե., 1983, էջ 453, 321:

⁷ Նույն տեղում, էջ 370:

⁸ Նյութը տրամադրել է բանագետ Լ. Ղեջյանը:

⁹ Չոլաքեան Հ., Քեսապ, Հալեպ, 1998, հատոր, Բ էջ 390:

¹⁰ Նոր ծնած կովի առաջին մի քանի օրերի կաթը եփելուց հետո առաջացած թանձր զանգվածը հայոց որոշ տարածաշրջաններում հայտնի է դալ, այլ տարածաշրջաններում՝ խիժ անունով:

¹¹ Մեծ թիվ են կազմում ազգագրական իրողություններ քողարկող դարձվածքներն ու արտահայտությունները (օրինակ, թան ծամելուց ընկնել, դեռ շատ հաց ու պանիր ես ուտելու, մածունբերան (բացբերան), կաթով լվացված (նենգ), անասոված պանիր և այլն), որոնց ազգաբանական ուսումնասիրությանը կանդիդատական արձանագրություններ են ներկայացրել:

ների հետ համեմատությամբ: «Մարդ կա՝ ջան է, մարդ էլ կա՝ թան է» առածում նկատի է առնվում թանի թթու համը ոչ այնքան մեղմ ու հաճելի բնավորություն ունեցող մարդուն բնութագրելու համար: Անհարկի զգուշավոր մարդը, որի վարքագիծը պայմանավորված է կոնկրետ դեպքով, բնութագրվում է «Կաթից բերանն էրվել է, մածունը փչելով է ուտում» առածով: Մարդկային հարաբերությունների կարգավորման իմաստուն խորհուրդներ են «Կաթը ըլնելուս կթափի», «Ոչ առաջ կաթն ու կորեկ, ոչ վերջը թուր ու դանակ», «Կրակի վրա եղ չեն լցնի», «Թող իրան եղով տապակվի» առած-ասացվածքները¹:

Առած-ասացվածքներում դրսևորվում է այս կամ այն կաթնամթերքի հարգը, արժեքը: Մարդու պատիվը, արժանիքներն ընդգծող «Մարդ կա՝ կարագ է, մարդ էլ կա՝ վարագ է» առածը, անշուշտ, կարագի հարգով է պայմանավորված: Եթե «Յուղը վեր ածես, կհավաքվի» արտահայտությունը չափազանցության միջոցով պատկերացում է տալիս տանտիրուհու մաքրասիրության մասին, ապա «Գետին թափած եղը էլ թոփ չի էղնի» առածով մեկ անգամ ևս ամրագրվում է յուղի բարձր արժեքը և մարդու վերաբերմունքը, քանզի աներևակայելի է, որ որևէ պարագայում տանտիրուհին անզգույշ գտնվեր ու յուղը թափեր: «Եղը կրակին էրվի, տեղիցը լնգալ չի» ասացվածքում ևս ընդգծվում է յուղի հարգը, քանի որ հատկապես արժեքավոր մթերքի նկատմամբ անտարբեր վերաբերմունքը կարող է բացատրվել միմիայն ծուլությամբ: Յուղի արժեքը ընդգծվում է նաև հանրահայտ «Բոշի եղն որ շատ ըլնի, կեսն էլ հետևը կքսի» առածում, «Գինը հալած ե՞ղ ես տվել (շատ չես տվել)» հեզնական արտահայտությամբ²:

Թանի հարգը արտացոլված է ապաշնորհ մարդուն բնութագրող «Ականջով մեկ թան չարժես», «Թան էլ չէ, թթու մածուն (շատ բան է ակնկալում)» առածներում, «թանագող (մանր բաներ գողացող)» արտահայտությունում: Նկատենք, որ այս արտահայտությունը, որ սկզբնապես վերաբերել է կաշաղակներին, բխում է չորաթանը բարձր տեղ չորացնելու սովորությունից, քանի որ նրանց երբեմն հաջողվում էր «գողանալ» գնդիկները:

«Պանիր ու հաց, սիրտը բաց», «Պանիր հաց չի, ամեն մարդու բան չի», «Թթու ա, թան չի, ամեն մարդու բան չի», «Փորձված թանը լավ է, քան անփորձ մածունը», «Սերը սովորն ա կերե, թանը՝ մոլորը», «Պառավն (սարի նանը, օջով) իրան թանին թթու չի ասիլ», «Թան կերանք թորթորացանք, մածուն կերանք, արդարացանք» և բազմաթիվ այլ առած-ասացվածքներում կաթնամթերքը հանդես է գալիս սոցիալական կարգավիճակի բնութագրիչի դերում: Կարագը (յուղը), սերը (դայմախը) հարստության չափանիշ են, ամեն մեկին հասանելի չեն, աղքատի կերակուր չեն: Թանը ամենքին էլ հասանելի է, ամենքն էլ կարող են ունենալ, ինչպես հաց ու պանիրը, որ ժուժկալ ապրելակերպի ցուցիչ է: Անկախ այս կամ այն կաթնամթերքի հարաբերական հարգից՝ այն ապրուստի ամենակարևոր մասն էր կազմում, ապահովված լինելու ցուցիչ էր, ինչը հստակ ընդգծված է «Հաց ու թան ունես, ամեն բան ունես», «Թացան կացած տուն սով չի մտնիլ» ասացվածքներում³:

«Գարու հաց, թթու թան, Պապեն ուտե, էրթա գութան» առածը գութանավորի ծանր աշխատանքն է արտացոլում: Կարի ժամանակ ձգտում էին սննդարար ուտելիքով խաշիլով, փլավով ապահովել ռանչպարին⁴: Հանդում ճաշ պատրաստելու մշակույթն ընդունված չէր, հեռու տեղեր ճաշ տանելն էլ՝ երբեմն հնարավոր, և դաշտի մարդու հիմնական ուտելիքը հաց ու պանիրն էր, որը հստակ արտահայտված է հանրահայտ «Հաց ու պանիր, կեր ու բանիր» առածում⁵:

Ի տարբերություն բանահյուսական մյուս նյութերի՝ առած-ասացվածքներում կաթնամթերքի պատրաստման նկարագրությունները չափազանց քիչ են: Հիշենք հազվա-

¹ Հակոբյան Գ., 1974, էջ 360, Ղանալանյան Ա., 1960, էջ 76, 139, Գևորգյան Թ., 1999, էջ 203-212:

² Հակոբյան Գ., 1974, էջ 360, 361, Գևորգյան Թ., 1999, էջ 203, Ղանալանյան Ա., 1960, էջ 163:

³ Ղանալանյան Ա., 1960, էջ 37, 278, 291, 92, 286, 319, Լալայան Ե., 2004, էջ 340:

⁴ Այս երևույթը հստակորեն արտացոլված է հորովելներում. «...Քշող հոտղին խավիծ, թան, Չքշողին անժուր թան...»: Լալայան Ե., 1983, էջ 382:

⁵ Ղանալանյան Ա., 1960, էջ 216, 218:

զյուտ նմուշները. «Չորաթանը թանից է», «Շտեղ արև աս, ընտեղ էլ չուրաթանս փռըմ են», «Թող գիտենա, որ թանը մածնիցն աս ըլըմ (իր տեղն իմանա)», «Եղը մածնիցը կըլի»¹: «Պանիրը մոթալն աս պահում, կնգանը՝ մարդը» առածը հուշում է պանրի գրեթե անհետացած տեսակներից մեկի մասին: Մոթալը գառան կամ ոչխարի մշակված կաշին է, որի բուրդը, ի տարբերություն տկի, հիմքից խուզած չէ, և նրանում սեղմելով տեղավորած պանիրը, որ նույնպես մոթալ է կոչվում, չի փչանում պանրի ու բրդի միջև եղած օդի շերտի շնորհիվ:

Որոշ առած-ասացվածքներ բացահայտում են կաթնատնտեսության ինչ-ինչ նրբություններ. «Էրնեկ էն կնգանը, որ ոնչ ախչկա գլուխն աս լվանըմ, ոնչ մածնիցը խնոցի հարըմ» ասացվածքում ընդգծվում է այն իրողությունը, որ մածնից կարագ հարելու գործընթացն ավելի բարդ ու աշխատատար էր, քան կաթի սերից²:

«Լվացած խնոցիեն եղ կհանի» առածը հուշում է, որ խնոցին պետք է մաքուր լվանային, որ հաջորդ անգամ համեղ և որակյալ կարագ ստանային: Առհասարակ մաքուր լվացած պետք է լիներ կաթի մշակման մեջ գործածվող ողջ սպասքը³:

«Թե մտքունդ տեղ կըլնի, բղըմըդ էլ եղ կըլնի» առածը հուշում է, որ յուղը պահել են կավե ամաններում, կճուճներում, որը որոշ տարածաշրջաններում կոչվում էր բղուղ, որոշ տեղերում՝ պուլիկ, օշնակ (մաշնակ) և այլն⁴:

«Մարագ ունիս, կարագ ունիս» բառախաղում նկատի է առնվում ձմռան համար ապահոված անասնակերով լի մարագը, այսինքն, անասունի խնամքից ևս կախված է կարագի քանակը. ընտանիքի պաշարը կապահովվի, եթե կենդանիների պաշարն ապահովված լինի:

Կաթնամթերքով կազմված որոշ առած-ասացվածքներում քղարկված են կենցաղային շատ գաղտնիքներ: Թանի, ժաժիկի նկատմամբ վերաբերմունքն արտահայտող «Պաս ուտեմ պաս, էն էլ թանե սպաս» և նմանատիպ այլ նմուշները հուշում են, որ ամենախիստ պասն էլ երբեմն խախտվել է: «Մոզին ես են պահմ, դայմախը մոքիրս աս ուտմ» առածը հիշեցնում է գերդաստաններում աշխատանքի բաժանման սովորույթի մասին, երբ եղբայրներից մեկը ռանչպար էր, մեկն անասնապահ, մեկն էլ՝ առևտուրը, տնտեսությունը կազմակերպող, ինչպես լուեցիներն են ասում, «հեշտ կյանքով ապրող, միջի մարդ» էր⁵:

Կաթի ու կաթնամթերքի կազդուրիչ, բուժիչ հատկությունների մասին ուղղակի վկայություններ կան նաև առած-ասացվածքներում. «Եղ՝ փորի դեղ», «Մերը ուտի եղեղեն, տղան կըլի խրեղեն»⁶:

Այսպիսով՝ հայոց բանավոր մշակույթի հարուստ ու բազմազան նյութերը պատկերացում են տալիս ուտեստի համակարգում կաթի ու կաթնամթերքի տեղի ու դերի, դրանց պատրաստման ու գործածման նրբությունների, ժողովրդական բժշկության մեջ կիրառության, մարդկանց պատկերացումներում հարգի, առտնին կենցաղում ունեցած պահանջարկի, անգամ սոցիալական հարաբերություններում առկայության (հարկերի, կաշառքի ձևով և այլն) մասին: Կաթնամթերքի շուրջ կառուցված բանահյուսական ամենաբազմազան նյութերը, նույնիսկ շուտասելուկները⁷ յուրօրինակ աղբյուր են ոչ միայն կաթնատնտեսության, կաթի մշակման գործի, այլև հայոց մշակույթի ամենատարբեր բնագավառների, վաղուց արդեն կենցաղավարումից դուրս եկած շատ երևույթների մասին:

¹ Նույն տեղում, 1960, էջ 200, 324, 325, Խենյան Է., 2000, էջ 220:

² Լալայան Ե., 2004, էջ 337: Գուցե նկատի է առնվում, որ հայոց մեջ ընդունված էր գերապատվություն տալ տղա երեխայի ծննդին:

³ Ղանալանյան Ա., 1960, էջ 26:

⁴ Լալայան Ե., 1983, էջ 371, Ղազիյան Ա., 1983, էջ 161, 162:

⁵ Ղանալանյան Ա., 1960, էջ 192, 200, 214, Լալայան Ե., 2004, էջ 339:

⁶ Ղանալանյան Ա., 1960, էջ 289:

⁷ Տե՛ս, օրինակ, Խենյան Է., 2000, էջ 231:

Асмик Арутюнян, Молоко и молочные продукты в фольклорных материалах. Молочное хозяйство традиционно имело почетное место в производственной культуре армян. Это отражалось и в фольклорных материалах–пословицах, поговорках, загадках, преданиях, молитвах, песнях и т.д.

В данной статье сделана попытка анализировать, те специфические фольклорные образцы, которые имеют познавательное значение не только для молочного хозяйства, но и для разнообразных явлений, давно забытых и исчезнувших из культуры армян.

Ключевые слова: молоко, молочные продукты, эпос, загадка, молитва, предание, басня, пословица, поговорка, песня, благословение, проклятие, клятва.

Hasmik Harutyunyan, Milk and Milk Produkts in Folklore Materials. Dairying traditionally has had its honourable place in the Armenian industrial culture, which is reflected in folklore materials–sayings, riddles, prayers, fables, legends, songs, etc.

This paper seeks to analyse, those specific folklore samples, which have cognitive significance not only for the Armenian traditional dairying, but also for other cultural phenomena, disappeared and forgotten long ago.

Key words: milk, milk products, epos, riddle, prayer, legend, fable, saying, song, blessing, curse, oath.